Յայնժամ դղրդեցաւ քաղաքն ամենայն, և խսկոյն ի վայրկեան ժամանակի խմբեցան անդ զօրք և զօրագլուխք, վաճառականք և արհեստաւորք, տեղականք և եկամուտք, որք յօրէնս Մահմատի էին՝ յարքունիս դիւղեցան։ Եւ որք էին ի վերայ մանսուպից և փառաց, որ վերասացաւ, երկեան ի գնալն ի համաժողով հանդէսն, և կամ թէ՝ չհամարեցան ինչ լինել բանին յառաջելոյ։ Եւ որք էին անդ, ոչ եկելոցն հայ և անհաւատ ասացին՝ համբաւ հանեալ։ Եւ հաւանեալ ամբոխն վէզիրին և որք գտան անդ ի զազիցն՝ զազի էսքէր արար (պարապ) և զՊուռնազ Հօճա գատէն՝ ի Պուրսայոյ մանզուլ ի ժամանակէ Ղարա Մուստաֆին՝ վասն քակելոյ զեկեղեցին Հայոց ի Պրուսայ, զնայ Անատոլի (Ղազի էսքէր) արար։ Եւ սպան զորս և կամէր. նախ՝ զթախլիսճի թագաւորին, և զՄէլէկն աքսորեաց իւրայնոքն հանդերձ. այս եղև Օգոստոս ամսոյ ԺՍ.-ն։

Եւ խորհէր զցայդ և զցերեկ քաջասիրտն Սիաւուշ, նաև մեծաւ հնարիւք սպան զմայր թագաւորացն Օսմանին, Մուրատին և Իպրահիմին, որ էր կին Սուլթան Ահմէտին, որ էր մեծահանճար կին, որ Քեոսէմ ասէին, զի սոքօք վարէր թագաւորութիւն որդոցն և ի բազում վրդովմանց և ի խռովութեանց էր ազատեալ։ Բայց Սիաւուշս գողացեալ զմիտս արքայի և ևս խրատիւ մօրն, զի իւր լիցի ամենայն փառք և շարժեսցի որպէս և կամեսցի, զի ի կենդանութեան նորա մտեալ էր սայ ի տուն և կարդայր զօրհնանապազ՝ սօֆի հանեալ զանուանն և սգաւոր ի վերայ առն իւրոյ Իպրահիմին. զայս արար զի սկսեսցի զիւրն, որպէս ասացաւ։ Սպանիլ վալիտէին մեծի՝ յՕգոստոս ԻԲ եղև։ Եւ ի սոյն աւուրս սպան զպօստանճի պաշին, զխաս օտայ պաշին, զզզլար աղասին, զքեհեայ մեծ վալիտին և որք էին սիրելիք և ներքինիք և գանձա-